

Հ Ր Ա Մ Ա Ն N 251-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«30» ՀՈՒՆԻՍԻ 2016 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ԿԱՄՈ ԱԴԱՄՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» և 33-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 17-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 75-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալի (ծածկագիր՝ 14-1.2-5) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 28-ի N 5 որոշումը և եզրակացությունը, ինչպես նաև Կ. Ադամյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կամո Այսերի Ադամյանին 2016 թվականի հունիսի 30-ից նշանակել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալի (ծածկագիր՝ 14-1.2-5) պաշտոնում՝ նրան ազատելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետի (ծածկագիր՝ 14-1.2-4) պաշտոնից:

2. Աշխատավարձը՝ համաձայն հաստիքային ցուցակի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ